ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ
LILIT GEVORGYAN

ՀԱՅՐԵՆԻՔԻ, ՍԻՐՈ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Անցյալի գնահատման մեր օրերում այդ արժեքներից շատերը նոր իմաստ ու նշանակություն են ձեռք բերում ստանալով արդիական հնչեղություն: Դրանցից է Մկրտիչ Պեշիկթաշլյանի քնարերգությունը, որ հեռվից հեռու անմիջականորեն արձագանքում է ժամանակակից հայ կյանքը հուզող հրատապ խնդիրներից առնվազն երկուսին:Բանաստեղծի ոգեշունչ հայրենասիրական երգերը, հատկապես Զեյթունյան շարքը, միանգամայն համահունչ են պետական անկախության ու ազգային ինքնության համար մաքառող մեր ժողովրդի արդիական հոգեբանությանն ու տրամադրություններին, իսկ նրա բներգության ու սիրերգության սրտահուզ նվագները գեղեցիկի ու սիրո պատգամաբեր կարող են լինել հոգու սովի մեջ հայտնված այսօրվա մարդու համար...

Պեշիկթաշլյանի գրական ժառանգությունը ծավալով մեծ չէ.մոտ վեց տասնյակ բանաստեղծություններ, չորս դրամա պատմական սյուժեով, մի քանի ճառեր և հոդվածներ: Ամենաարժեքավորը բանաստեղծություններն են, որոնք իրենց թեմատիկայով, խոր զգայափարայնությամբ ու բարձր արվեստով երևույթ են հայ քնարերգության պատմության մեջ:

Պեշիկթաշլյանի բանաստեղծական հետաքրքրություններն ու ճաշակը ձևավորվել են Մուրադ-Ռափայելյան վարժարանում մխիթարյան հայրերի միջավայրում, ուստի նրա բանաստեղծություններից կեսից ավելին գրաբարալեզու են, աշխարհաբար երգերն էլ գրաբարյան լեզվամտածողության նկատելի կնիքն են կրում:Դրանցից ,սակայն, չի թուլանում այդ երգերի գեղարվեստական հմայքը,այն հետաքրքրությունն ու հիացմունքը,որ ցուցաբերում էին ժամանակակիցները դրանց նկատմամբ: Պատճառն այն է, որ բանաստեղծը նրբորեն զգում էր ժամանակի ազգային կյանքի զարկերակը, լավ էր ճանաչում լուսավորական դարաշրջանի մարդու հոգեբանությունը, նրա զգացմունքների ու խոհերի աշխարհը և քնարերգության հավերժական թեմաները՝ հայրենիք, սեր, բնություն, կարողանում էր հնչեցնել այդ աշխարհին սրտամոտ ոիթմով ու շեշտերով:Այսօրվա հայ մարդը իր առջև ծառացած մարտահրավերներով, իր երազանքներով, հույսերով ու սպասելիքներով շատ չի տարբերվում Պեշիկթաշլյանի դարաշրջանի մարդուց.այսօր էլ աշխարհասփյռտ հայը հայրենիքի կարոտ ունի, այսօր էլ

հարկադրված է զենքով պայքարելու իր հողի ու ինքնության համար, այսօր էլ երազում է միասնություն ու համազգային եղբայրություն: Ուստի Պեշիկթաշյանի երգերը, իրենց մեկուկեսդարյա հնությամբ հանդերձ, դեռ ասելիք ունեն մեզ...

Հայրենիքի թեման ամենատարածվածն էր 19-րդ դարի 50-60-ական թվականների հայոց բանաստեղծության մեջ: Գրում էին հայրենիքի անցյալի, ներկայի, ապագայի հեռանկարների ,ազատության երազների մասին: Ստեղծվել էր չափածո հրապարակախոսության յուրօրինակ մի ժանրատեսակ, որի համատարած հոսքի մեջ ձիչ էին իսկական գեղարվեստական արժեքները: Այդ քչերից են Պեշիկթաշյանի հայրենասիրական քնարերգության լավագույն էջերը:

Հայրենասիրությունը Պեշիկթաշյանի բանաստեղծություններում խորապես անձնականացված քնարական զգացմունք է,որ հնչում է սրտառուչ մեղեդայնությամբ: Բանաստեղծն օժտված էր նաև երաժշտական ձիրքով և մասնակցել է իր տեքստերով երգերի ստեղծմանը: Ավելին, իր բանաստեղծություններից շատերը կառուցել է երգային սկզբունքով՝ բանաստեղծական տողի հնչեղ ներդաշնակությամբ, կրկներգերով: Պատահական չէ, որ բանաստեղծության խորագրից հետո հաճախ հանդիպում է <<երգ>> ծանուցումը: Այս սկզբունքով են կառուցված <<Ծերն Վանա>>, <<Գարուն>> բանաստեղ- ծությունները, <<Զեյթունյան երգեր>> շարքը:

<<Ծերն Վանա>> բանաստեղծությունը հայրենիքի բախտով մտահոգ վանեցի ծերունու սրտաբուխ խոսքն է ուղղված իր դստերը Մեհեկին, որի սիրած տղան <<սիրատարփ կտրիճ Արտակը>>, հրաժարվել է անձնական երջանկությունից՝ հայրենիքի ազատության գործին նվիրվելու համար: Բայց փրկության արշալույսը դեռ հեռու է: Այս ցավոտ զիտակցությունը դառնում է կրկներգ յուրաքանչյուր քառատողից հետո.

Գոց են ամպով աստղունք...և հուս.
Դեռ շատ հեռու է արշալույս:

Տխուր հանգերգը,սակայն, բանաստեղծության ավարտին հնչում է հավատի ու հույսի շեշտերով.

Եվ դու, Մեհեկ,կուլա՝ ս անհույս.
Ո՛չ. ո՛չ, գնա ...գա Արշալույս:

Զեյթունյան հերոսամարտի շատ մասին շատ երգեր են հայտնի 50-60-ական թվականների հայ քնարերգության մեջ: Դրանց շարքում առանձնանում են Պեշիկթաշյանի չորս բանաստեղծությունները՝ <<Հայ քաջորդի>>, <<Մահ քաջորդվույն>>, <<Թաղումն քաջ քաջորդվույն>>, <<Հայ քաջուհին>>, որոնք կազմում են <<Զեյթունի երգեր>> շարքը: Բանաստեղծությունները միասնաբար զարգացող սյուժետային գծով ներկայացնում են

յուրօրինակ քնարաէպիկական պոեմ։Առաջին բանաստեղծության մեջ տեսարանի կենտրոնում հայ «խարտիշագեղ պատանին» է՝ «սիրտը ցաված» և մտահոգ։ Ի՞նչ է ուզում նա. «մեծ, փոթորկյալ ծովի» մխիթարող հմայքը, զեփյուտի շոյանքը, երկնքի աստղային ժպիտը, մայրական սիրո սփոփանքը, թե՞ սիրածի «անուշ զգվանքը»...

Բոլոր այս հարցումներին ի պատասխան կտրուկ հնչում է. «Կուզեմ վառող և գնդակներ»։ Այսպես բացվում է երգի հղացման խորհուրդը։ Հաջորդ բանաստեղծության մեջ տեղի է ունենում հաղթական ճակատամարտ։ Թուրքերը պարտվում են։ Մահացու վիրավոր հայ պատանին դիմում է մորը, որ չսգա իր մահը. չէ՞ որ դեռ օրորոցում նա պատգամել է իրեն, որ «կենաց արևը» զոհի հանուն հայրենիքի։

Ուստի Խաչ մը տնկե վրաս ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն։

Հաջորդ «Թադումն քաջորդվույն» բանաստեղծությունն ունի «Պար հայրենակցաց» ենթավերնագիրը։ Զոհված քաջորդու զինակիցները հոդին են հանձնում հերոսի դին։ Քնարական պահը ստանում է էպիկական վեհություն։ Արտաքին պերճանքից զերծ չափատողերը հնչում են հպարտ տրտմության գերազդեցիկ շեշտերով.

Ո՞չ փող զարկինք, ո՞չ արձագանք լեռնասույզ
Մարե ի սար չարագուշակ տարին լուր
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտահույզ,
Երբ պատահվույն բացին մռայլ փոսին դուռ։

«Գիշերային մուսք ստվերները», «լուսնկայի շողերը» ծածկող «մթին ամպերը» ակնածալի զարմանքով իրենց գլուխները խորարհած լեռները,- ամեն ինչ լուծվում է պահի լուռ հանդիսավորության մեջ.

Հայնժամ ցուրտ-ցուրտ հող լեցուցինք յուր վրան.
Խաչ մը դրինք, ինչպես յուր մոր պատվեր ետ
Ո՞չ ալ շքեղ արձանագիր, ո՞չ տապան,
Զինքը մենակ թողուցինք յուր փառքին հետ։

Վերջին բանաստեղծության մեջ փոխվում է տրամադրության երանգը։ Հայրենի լեռների համայնապատկերի վրա երևում է հայ աղջիկը, բայց ոչ արբենալու համար զարնանային բնության գեղեցկություններով։ Ծաղիկների փոխարեն նրա կուրծքը զարդարում է «բոցանշույլ զրահը»։ Նա շտապում է հայրենիքի ազատության կովին։

Արիության ու քաջության իր օրինակով նա ոգեշնչում է հայ կտրիճներին։ Առջևից սլանում է քաջ «հայուհին» «որպես շանթից հրավառ նիզակ»։ Ճակատամարտն ավարտվում է հաղթանակով։ Հայ քաջուհու ճակատին ծաղկեպսակի փոխարեն շողշողում է հաղթության դափնին...

19-րդ դարի 50-60-ական թվականների հայ ազգային գիտակցությունը հակված էր ժողովրդի պատմության աղետալի շրջադարձերը բացատրել գլխավորապես ազգի անմիաբանությամբ: Այդ խնդիրը առանձին սրությամբ դրվում էր կաթոլիկ քարոզիչների պառակտիչ գործունեության ակտիվացման օրերին: Ուժեղ էին նաև այդ վտանգավոր իրողությանը հակազդող տրամադրությունները, որոնք իրենց մեծարվեստ արտահայտությունն են գտել նաև <<Եղբայր եմք մեք>> բանաստեղծության մեջ.

Ի բյուր ձայնից բնության շրքեղ
Թե երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թե որ զարնեն փափուկ քնար,
Չունին ձայն մի այնքան սիրուն.
Քան զանձկալի Եղբայր անուն...

Երգեցիկ տաղաչափությամբ ու երաժշտական շեշտադրությամբ հյուսված այս բանաստեղծությունը, չնայած գրաբար լեզվին, հետագայում, լայնորեն տարածվելով ժողովրդի մեջ, պիտի դառնար սիրված ազգային հիմներից մեկը:

Զգացմունքի ռոմանտիկական ազատությամբ ու անմիջականությամբ, արտահայտչական ձևերի պարզությամբ ու նրբությամբ աչքի է ընկնում <<Գարուն>> բանաստեղծությունը՝ հայ հայրենասիրական քնարերգության ընտիր էջերից մեկը, որ անվանի երգահան Տիգրան Չուխաջյանի երաժշտությամբ հնչում է մինչև այսօր.

Ո՞հ, ի՞նչ անուշ և ինչպե՞ս զով
Առավոտյան փչես,հովի՞կ,
Ծաղկանց վըրա գուրգուրալով
Եվ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ Հայրենյաց,
Գնա՛, անցի՛ ր սրտես ի բաց:

Այսպես հայրենակարոտ բանաստեղծը հոգով անհաղորդ է մնում օտար թռչնիկի երգին, օտար ավակի զվարթ կարկաչին: Բայց

Թեպետ թռչնիկն ու հովն Հայոց
Ավերակաց շըրջին վերա
Թեպետ աղվորով վտական Հայոց
Նոճիներու մեջ կը սոդա,
Նոքա հառաչք են հայրենյաց,
Նոքա չերթա՛ ն սրտես ի բաց:

Բնության ու սիրո թեմաների բանաստեղծական արձարձումները Պեշիկթաշլյանի հայրենասիրական քնարերգության մեջ ձևային-արտահայտ-

չական դերակատարումից բացի,ունեն նաև բովանդակային կարևորություն: Ամենից սուաջ դրանք վկայում են բանաստեղծի բնարական աշխարհի միասնականության մասին,ուր, ինչպես ամեն մի իսկական քնարերգուի ստեղծագործության մեջ, թեմաները, որքան էլ բազմազան ու բազմաբնույթ, մեկուսացված չեն իրարից, բխում են մեկը մյուսից, փոխադարձաբար պայմանավորված են մեկը միմյանցով: Եվ բոլորը միասին մատնանշում են քնարական աշխարզգացողության մի ամբողջական համակարգ, որով բանաստեղծը զգում, վերապրում է շրջապատող աշխարհը իր անընդգրկելի բազմազանությամբ հայրենիք, բնություն, սեր և առհասարակ մարդկային գոյությունը բովանդակավորող ամեն ինչ:

Այս տեսանկյունով դիտված Պեշիկթաշյանի սիրո և բնության երգերը պարզում են մարդկային ներաշխարհի և բնական ու հասարակական միջավայրի հաղորդացության, գոյաբանական ընդհանրության քնարական մի մեկնակետ, որ նորություն էր ժամանակակից հայոց բանաստեղծության մեջ, թեև ժառանգորդական որոշ հանգույցներով կապվում էր հայ միջնադարյան քնարերգության ավանդույթների հետ: Այդ երգերում սերը ազատ է սառը կլասիցիստական կաղապարներից,հանդես է գալիս ինքնադրսևորման անկաշկանդ ու բազմազան հնարավորություններով, բնությունը շողում է հազար ու մի գուներանգով, ձայների ու ձևերի անվերջ թրթռացող խաղերով, որոնք շունչ ու կենդանություն են առնում մարդու ներքին ու արտաքին տեսողության ոլորտում: Պեշիկթաշյանի երգերում մարդու կոչման գլխավոր խորհուրդը եթե հայրենասիրությունն էլ է, ապա դա միայն ազգային-քաղաքացիական պարտքի անձնուրաց գիրակցություն չէ. հայրենիքը իբրև բարձրագույն արժեք, մարդը իր զգացմունքների հարստությամբ, բնությունը՝ իր անչափելի գեղեցկություններով, անբաժան են իրարից, մեկը մյուսի շարունակությունն ու լրացումն է: Այնուամենայնիվ բանաստեղծի քնարական հայացքը չի նույնանում բնության պանթեիստական պաշտամունքի հետ. բնությունը նրա քնարական տեսադաշտում ինքնակա արժեք է.

<<Ճեմք ի լեռն հսկային>> բանաստեղծությունը գոյության հիմն է, լինելիության փառաբանություն: Միրահաբ զույգը բարձրանում է լեռն ի վեր: Տեսարանները՝ մեկը մյուսից շքեղ, հաջորդում են իրար, հաճախ նկարչական գունագեղությամբ.

Հուր հեր արփվույն կընծավալի
Ի դաշտ, հարուտ գեղաժպիտ,
Ծովն ի հերկինս կընդմայլի,
Երկինք ի ծով ծիծաղախիտ...

Շարժուն, անընդհատ փոփոխվող բնապատկերը կենդանանում է դրան

լիաբուխ ընդառաջ նետվող մարդկային ներաշխարհի թրթիռով, որ իբրև հանկերգ կրկնվում է յուրաքանչյուր տան վերջում.

Բաե՛ք, հաճույք,փառկ թեր,
Տաե՛ք զմեզ բլուրն ի վեր:

Բնության գրկում իմաստ ու բովանդակություն են ստանում մարդկային գոյությունը, սերը: Գեղեցիկ կույսն էլ իր հերթին դառնում է բնության զարդերից մեկը: Այս գաղափարը նորանոր քնարական արտահայտություններ է ստանում Պեշիկթաշյանի <<Աշուն>>, <<Հալեմտաղը>> այն գեղեցիկ>>, <<Ո՞ւր էր թե զեփյուռիկ...>> և այլ բանաստեղծություններում: Մի դեպքում բնապատկերը պարզ միջոց է՝ սիրո զգացմունքի խորությունն ու գեղեցկությունը ցուցադրելու համար,մի այլ դեպքում բնությունն՝ իր գեղեցկություններով, մարդը՝ իր ներաշխարհի հարստությամբ, երկխոսության մեջ են, որի ընթացքում ակնթարթորեն լուծվում կյանքի առեղծվածը, իսկ երբ երկուսն էլ լռում են, խոսում են արդեն սրտերը.

Երբ՝ բնությունն անխոս կենա,
Մահկանացուք ձայն չեն հաներ,
Լուռ է ամեն ինչ, որ շուրջ կա.
Ավելի տա՛ք խոսին սրտեր:

Պեշիկթաշյանի քնարերգությունը ռոմանտիկական գեղագիտության վավերական հաղթանակներից է հայոց նոր բանաստեղծության մեջ:Նրա ինքնուրույն և ինքնատիպ անհատականությունը ձևավորվել է ֆրանսիացի ռոմանտիկներ Լամարթինի, Ալֆրեդ դը Մյուսեի,Վիկտոր Հյուգոյի և ուրիշների դասական արվեստի մթնոլորտում, բայց ստեղծագործական նկարագրի աներկբա հայկականությունը խորքից շնչում է հայ բազմաղարյան քնարերգության ոգով ու ոճով:

L.G.Gevorgyan - Themes of Motherland, Love and Nature in the Poetry of Mkrtich Peshiktashlyan

The article covers the romantic poems of Mkrtich Peshiktashlyan, apologist of the Armenian National Liberation Movement of 50-60s of the 19th century, particularly the series of "Zeytunyan erger" (Zeytunyan Songs), which were widely known in the Armenian poetry of that time. Peshiktashlyan's patriotic poetry was created in a unique genre of poetic publicism and is the direct response to both the poet's and the modern national identity issues.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Թոպչյան,Մկրտիչ Պեշիկթաշյանի կյանքն ու գործը,Փարիզ,1907:
2. Ա.Ինճիկյան,Մկրտիչ Պեշիկթաշյան (Մ.Պեշիկթաշյան,Տաղեր, Ե., 1947, էջ 5-7):
3. Հ.Օշական, Համայնապատկեր արևմտահայ գրականության, հ. 2. 1953:
4. Ս.Սարիբյան,Հայկական ռոմանտիզմ,Եր.,1966:
5.Վ.Սաֆարյան,Մկրտիչ Պեշիկթաշյան:Կյանքը և ստեղծագործությունը, Եր., 1972: